

ւած փայտէ «չաղմեղներեց» կապում են ձիերը, ջորիները և էշերը. երկրորդ մասում պահում են կովերն ու եզները, իսկ երրորդ մասում՝ ոչխարները, այծերը ու գառները:

Գոմի մի անկիւնում շինւած է ջրհորը, որի առաջ գտնւում է քարէ մի «հովգ»՝ աւազան, որի մէջ ձմեռը ջուր են լցնում, որ խմեն անասունները: Իսկ մի այլ կողմում, պատի տակ, շինւած է «սաքուն», ուր ձմեռ ժամանակ մնում է անասնապահը: Գոմում է գտնւում «բուն», ուր ապրում են աքաղաղներն ու հաւերը:

Գոմին կից, բակի մի մասում, իրար կողքի շինւած են՝ «օխշըրնոցը» և «գառնանոցը», որոնք ունեն ցած պատեր և մի — մի դռներ, որոնց գիւղացիները կոչում են «չարչուներ»: Ընդհանրապէս գարնան և ամառն «օխշըրնոցում» և «գառնանոցում» են գիշերում անասունները:

Գոմին կից շինւած է նաև «մարագը», ուր պահում են կովերի, ոչխարների, այծերի և գառների կերը՝ հօնջա, դուռա, և այլն: Կայ նաև մի միծ և հասարակ սենեակ՝ «աշկուն», որի մէջ պահում են ձիերի, ջորիների և էշերի կերը:

Վ. Ի. Ն. Մ.

ԱՐԱՐ ԵՐԵՄԵԱՆ

(Շարունակելի)

1. Գիւղական տան դռների առաջ պատկած են վիթխարի և պերճաւոր զամբուները, որոնք իրեն դահւապաններ հսկում և աղբիւրում են օտարական ճանապարհորդների դէպ կամ տանից ներս մտնելը: Եւ երբ մարդ ցանկանում է մի տանից միւսն անցնել, շան յարձակումից զերթ մնալու համար, ստիպւում է զիմեղ գիւղացու օգնութեան:

«New-York Times» լրագրի վերջին կիրակնօրեայ մէկ թիւը հետաքրքրական ծաւալ մը ստացել է: Ան կը պարունակէ 192 էջերու վրայ 501 սիւներով լուրեր, յօդուածներ և լուսանկարներ և 862 սիւն ծանուցումներ: Լրագրին այս մասնաւոր տպագրութիւնը յառաջ եկած է ստուաւ թափել նիւթերուն համար, որոնք անտիպ մնացել էին Նիւ-Եորքի վերջին տպարական գործադուլին պատճառաւ: Սոյն թիւին 565 հազար օրինակ տպագրելի թուղթին ամբողջական կշիռն է 877 տակառաչափ:

ՀՆԱԽՈՍՈՒԿԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Հ. Ի. Ն. ՀԱՅՈՑ ԳՈՒԼ

ԱՌՏՆԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

(Շար. սեւ Բագմ. էջ 332)

Գլխաւորապէս ազնուազգի մանկունքն են, որոնք ջիշ անգամ երեւելով հասարակաց գիշերօթիկ դպրոցաց մէջ¹, սովորաբար իրենց դաստիարակութիւնը կ'ընդունին հայրենի յարկին ներքեւ, որ կարող էր լաւագոյն և ընդարձակագոյն զոհացում տալ իրենց բարոյապէս և նիւթապէս: Արդէն Բ գլխով խօսեցանք կրօնաբարոյական մասին վրայ: Ինչ որ կը վերաբերի մարմնական կրթութեան, պիտի տեսնենք գործիս երկրորդ մասին մէջ: Իսկ հոս կը մնայ ճնշել առտնին դաստիարակութեան եղանակը, և ասոր հետ ընկերական ու մտաւոր զարգացման բաժինը՝ որ կ'աւանդուէր անոնց:

Ինչպէս զրոյս սկիզբն ալ դիտեցի, ընտանեկան կամ իսկական կրթութեան մանրամասնութեանց նկատմամբ աղքատ է մեր հին պատմութիւնը, և քանի մ'ընդհանուր տեղեկութիւն միայն տուած, որոց մէջ պիտի հանենք ինչ որ կարելի է՝ մեր նիւթին փոքր ի շատէ ընդարձակ ծանօթութեան համար:

1. — Ըսի կանխաւ՝ թէ ազնուական մանկանց անդեան նախնական շրջանին աւարտմամբ՝ դայեակը կը հրաժարէր իւր պաշտօնէն, ու մանուկը կը տանէր կը յանձնէր ծնողացը: Հոս կը սկսէր բուն կրթութիւնը. և դայեկին կը յօշորդէր դաստիարակը, — թարգմանութեանց մէջ կուշտած նաև հելլենաբար մակնավարժ դաստիարակ², — որ զարգացած, իւր պաշտօնին

1. Աստ՝ 38-3, — 2. Պատմ. Աղ. 15,

պատրաստուած՝ բայց ուսմիկ դասէն անձ մ'էր, և այս պատճառաւ կարող էր հեռանալ իւր տնէն ու բնակիլ սանին ծնողաց քով, կազմելու համար զայն իւր ապագայ ասպարիզին:

Շատ կանուխ կը սկսի դաստիարակն իւր պաշտօնը, ինչպէս նկատեցինք յառաջագոյն¹. և այդ ժամանակն ու կըրթութեան վայրը զգալի են Ղազարայ վնասութենէն, որ կը պատմէ՝ թէ երբ մեր նախարարը կեղծ ուրացութեան կեղտով դարձան Պարսկաստանէն իրենց տըները, և ամէն մարդ կը խորշէր անոցմէ, իրենց «տղայք անձկոտը», որոնք կը գտնուին հող՝ իրենց հայրենի տներու մէջ, և զորս հայրերն իրենց գիրկը կ'առնուն, — այնքան փոքր էին տակաւին, — «ի զրկաց հարց իւրեանց պակուցեալը փախչէին»². և նայելով իրենց մայրերու արտասուաց, իրենք ևս «յարտասուս հարեալ» կու լան. այնպէս որ ոչ ոք կրնար զանոնք լռեցնել «ի դայեկացն», — որոնք տեսանք թէ պաշտօնը դադրելէն վերջ ալ կը պահէին միշտ իրենց կապը սաներուն հետ³, — և կամ «ի դաստիարակացն»⁴, որոնք արդէն սկսած են, հող՝ անոնց ծնողաց տան մէջ, առաջնորդել այդ մատաղ տղայոց. և անոնք հետ սերտիւ կապուած են, հետեւելով անոնց քայլերուն, ուղղելով անոնց զգացումներն ու արտօսը անգամ. Այդ դաստիարակաց մէջ բնաւ չեն յիշուիր օտարազգիք. և հաւանական ալ չէ թէ սովորական լինէին. որովհետեւ այդպիսիք չպիտի կարենային տոհմային բաւուց մէջ կրթել իրենց սաները:

Սակաւագիւտ դիպուածներ են՝ որ ազնուականաց դաստիարակ կարգուին եկեղեցական դասէն, ինչպէս տեսանք զՍ. Միսրոբ, որ իւր աշակերտաց մէջ ունի և իշխանորդիներ՝, և ամ թաշգոս վարդապետ, որ զՊապեդոնի իշխանորդին՝ Հեթում Ա. արքայն կը կոչէ «ձեռասուն որդի»:

Իմանալով անշուշտ այս նշանակութեամբ՝, շնորհաց բարեպաշտութիւնը և եկեղեցականին համբաւն էր՝ որ այդ ընտրութիւնն ընել կու տար:

Ձեռք գիտեր՝ թէ ե՛րբ կ'աւարտէր դաստիարակին պաշտօնը: Հաւանօրէն անոր վերջ կը դնէր ոչ թէ սանին տարիքը, այլ ստացած կրթութիւնը, որ կը թուի թէ կը շարունակէր ոմանց վրայ նաև յետ ամուսնութեան, որ շատ կանուխ կը կատարուէր, նոյն իսկ երբեմն երկուսով ևս նամեայ հասակին⁵, որը զօրաբաւ կրնար լրանալ դաստիարակութեան գործը:

Ջաւակաց կրթութեան թէև հետամուտ ու պահանջող, բայց անոր մէջ իրական բաժին չունի հայ իշխանը, և ամբողջ գործը յանձնած է դաստիարակաց⁷, ինք զբաղած լինելով կենցաղական ու քաղաքական հոգեբով: Զի մասնակցիւր անոնց զբօսանաց և որսերուն անգամ: Զանոնք հեռի կը պահէ նաեւ խնճողներէ՝ որոց կը հրաւիրուի ինք և միայնակ կ'երթայ⁸: Մայրն է միայն՝ որ կը հսկէ անոնց դաստիարակութեան վրայ, ինչպէս կը տեսնենք զՓառանձեմ թագուհի, որ կը հետապնդի իւր Պապ զաւակին ընթացքին, կը խրատէ ու կը յանդիմանէ զայն, մինչ հայրն Արշակ բնաւ չի զբաղիր անոր հետ⁹. նոյն վարմունքը նկատեցինք կանխաւ ուրիշ տիկնանց վրայ ևս¹⁰:

Աւելի մեծ է խնամքը, զոր կը վայելեն այն պայազատները, որ պիտի յաջորդեն իրենց հօր՝ ազգին կարեւոր մէկ ծառայութեան մէջ. և այն՝ անդրանկութեան զօրութեամբ, որ պատուոյ և ժառանգութեան առաւելագոյն իրաւունք մը կու տայ նախածինին՝ քան միւս եղբարց¹¹: Այս պարագայն կը զգացնէ մեզ Ապլարսի պ Մարգարէ 1040 ին, սրտցաւութեամբ մը զրելով՝ թէ «անտես էի ի հօրէ իմմէ յաղագս կրսերութեան¹²»: Տարբեր ուշադրութիւն կը լինէր զահաժառանգաց, Պապ

1. Աստ՝ 24. — 2. Աստ՝ 25. — 3. Փրպ. 160. — 4. Աստ՝ 99. — 5. Սիւս. 76. — 6. Փաւս. 11-12. — 7. Աստ՝ Ման Բ, Գ, Զ. — 8. Զաքեր, 139. —

9. Փաւս. 155-6. — 10. Աստ՝ 51-3. — 11. Միսրոբ. 20-Ա. — 12. Դիր. 53.

արքայի մահուան ժամանակ անոր որդիքն Արշակ ու Վաղարշակ զեռ «պատանեակ» են։ Մանուէլ սպարապետը կը վանէ անոնց հօրեղորորդին՝ ապօրինի և յանցապարտ թագաւորը Վարազդատ, ինք ձեռք կ'առնու Հայաստանի ղեկը, և միանգամայն «իբրև զսանձանցանէր» զանոնք¹, մինչև որ յետոյ փեսայացոց իրեն զԱրշակ անդրանիկը, և թագաւոր կարգեց²։ Յետոյ մեր աշխարհին բաժանամար՝ Շապուհ զԹոսրով Գ «մանուկ» Արշակունի կը թագաւորեցնէ պարսկական Հայաստանի, և անոր «դատարակ» կու տայ Զիկ նուիրակը³, Նաև կանխաւ տեսանք՝ թէ արքայորդւոց դատարակ՝ իշխաններ էին միշտ, որոնք յետ դայեկութեան՝ կը կատարէին այդ պաշտօնն ալ⁴։ Այս թագին պայազատաց նկատմամբ։

Մեծ եղած է նաև Սպարապետական կամ Մամիկոնեան զարմին կրթական գործն իւր սերնդոց վրայ, մեծի և փոքրի, որ զիտէր անոնց մէջ ղնել հայրենասիրական և աստուածաշնորհական բոցը, որոյ փայլուն ժառանգորդաց շարքը երկար է անոնց պատմութեան մէջ։ Վաչէ, Վասակ, Մուշեղ, Մանուէլ, Վարդան, Վահան և այլք։ Ասոնց դատարարականութեան կը հետաքրքրուին նաև Հայաստանի բարձրագոյն իշխանութիւնը, պատրաստելու համար արժանաւոր զօրագլուխներ Հայոց բանակին։ Յիշեալ Վաչէ վախճանելով, կը թողու «մանկիկ մի» Արտաւազդ անուն, որուն թագաւորին ներկայութեանը կը կապեն հօրը պատուոյ վարսակալը, և կ'անուանեն անոր յաջորդ։ Բայց սպարապետութեան գործը կը յանձնեն առժամապէս Մամիկոնեանց փեսայից, Արշաւիր կամարականի և Անդովկ Սիւնեցոյ, որոց թագաւորն ու կաթողիկոսը միանգամայն կը յանձնեն «սնուցանել»՝ այս ինքն դատարարակել «զպատանեակն»,

որպէս զի ժամանակին ձեռք առնուր հայրենի սուրը⁵։ Այս Արտաւազդը յետոյ եղբարց հետ դայեակ տեսանք Արշակ զահաժառանգին⁶։ Աւարայրի մեծ նահաւտակին պիտի յաջորդէր ժամանակին անոր եղբորորդին Վահան, որ Վասակ և Արտաշէս եղբարց հետ ոչ միայն սնունդ ու բարեպաշտութիւն⁷, այլ և լայն դաստիարակութիւն մը կը ստանան իրենց ժրագլուխ Զուիկ մօրէն, և ադոր շնորհիւ «յառաջադէմք էին յամենայնի և հռչակաւորը, որը մինչ զեռ ևս ի տիս մանկութեան էին, ամենայն տեսանող մտաց երևէին աջողակը և զարմանալիք»։ այնպէս որ անոնց յառաջադիմութեան դէմ աստամ կը կրճտէին ուրացող իշխանաց դասը, որ չէին հանդուրժեր Մամիկոնեան ազգանուէր ու պայքարող քաղաքակաւ նուիրեան⁸։

Եւ իրենց իսկ Մամիկոնեանք ինձամ կը տանէին նաև մեծ պատերազմին զիւցազներէն Արշաւիր կամարականի որբացած որդւոց, որ թոռներն էին ս. Վարդանայ, և զորս «խրատել և հրահանգել ըստ իւրեանց իմաստութեան և արուեստի ջանային»⁹։

Իրենց որդւոց դատարարական նոյն նախանձով վատուած էին նաև միւս անկեալ և գերեզմ իշխանաց տիկնայքը, որոնք «թէպէտև ի նեղութեան էին» քաղաքայիչ պատերազմին երեսէն, կ'ըսէ պատմիչը, սակայն և այնպէս «անփոյթ և անպիտան կանանց» չեն ուզեր նմանիլ, այլ «իբրև զքաջայարս՝ զառաջիկայ զօգտաբեր շքեղաբար հրահանգս մանկանցն հոգացեալ նուիրն»¹⁰։

Նոյն հոգն ու ջանքը կ'երկն նաև հետագայ դարերու ազնուականութեան մէջ, որոց պտուղը տեսանք մասամբ¹¹, և զեռ պիտի տեսնենք քիչ յետոյ շատերու վրայ։

2. — Ինչպէս էր այդ դատարարականութեան եղանակը, կամ ազնուազգի սա-

1. Փաւս. 244, — 2. Նոյն՝ 256, — 3. Նոյն՝ 261, — 4. Աստ՝ 23-4, — 5. Փաւս. 28, — 6. Աստ՝ 13,

24, — 7. Աստ՝ 17, 51-2, — 8. Փրպ. 334-7, — 9. Նոյն՝ 338, — 10. Նոյն՝ 334, — 11. Աստ՝ 67-68:

ներուդ կեանքն ու դիրքն ընտանեաց մէջ և ընկերութեան հանդէպ, անոնց տրուած սկզբունքներն և ուսումը: Ահա ինչ որ գիտենք այդ մասին:

Արքայորդին, — ինչպէս կը կարգանք Պապի համար, — անտարակոյս և իշխանորդին, հայրենի զոհկին կամ ապարանից մէջ առանձին տուն կամ յարկարան ժին մ'է բռնած դաստիարակին հետ, ուր կը բնակի և կը ննջէ յատուկ սենեկի մը մէջ՝ ոտնաւոր զանդից վրայ: Ունի սենեկապան մը, որ կը սպասէ ուղղակի պատանուին հրամանաց, անոր սրտակիցն ու զաղտնի կամ յայտնի գործակիցն է, և անոր ընկերները կամ արհորժած անձինքը կը մուծանէ անոր քով: և երբեմն վրիպելով դաստիարակին ուշադրութենէն, պատանուին բարոյական քայքայման օժանդակ կը դառնայ:

Մայրը, որ ըսինք թէ կը հսկէր զաւակին վրայ, բնակութեան այդ անջատման պատճառաւ երբեմն ի լրոյ միայն կ'իմանայ անոր գործերը, և սոսկ չափով մը կրնայ հրամայել այդ ապագայ արքային կամ նախարարին. այսինքն որքան նա կը հաճի լսել իրեն, և կամ ինք կը յաջողի ենթարկել զայն իւր մայրենի իշխանութեան: Այսպէս Պապ, որ իւր ընկերաց հետ զեղծումներ կը գործէ սենեկին մէջ՝ մասնակցութեամբ սենեկապանին, կը դիմադրէ փառանձնմի, որ ուրիշներէ «զգալով» զաւակին ընթացքը, ներս կը մտնէ խափանելու համար. և նա ճշելով ու վայելով՝ կը ստիպէ մայրը մեկնել, որ կ'ենէ՝ աւաղելով ինք զինքը: Յայտնի է հոս այդ պատանուին չափով մ'անկախութիւնը մօրմէն. բայց ուրիշ տիկին մայրեր, որոնք քան զփառանձնմբ բարոյապէս զօրաւորագոյն հոգով վիճաւ կամ էին, գիտցան իրենց ձեռաց մէջ առնուլ զաւակաց սիրտը, և ձեւել զայն բարոյականի կաղապարին մէջ, պատրաստ

տելով քրիստոնեայ և առաքինի որդիներ, ինչպէս տեսանք¹. անտարակոյս պատմութեան ալ ի գործ դնելով անոնց վրայ՝ երբ պէտք լինէր, բայց միշտ ինայելով²:

Բոլոր իշխանորդիք ունին նաև իրենց ծառաները, որոնք դաստիարակաց հետ կ'ընկերեն իրենց՝ որսորդութեան և ուրիշ մարզական զբօսանոց մէջ, օգնելով անոնց և կրելով անոնց կրկնոցները, ինչպէս մանր պիտի տեսնենք աշխատութեան երկրորդ մասին մէջ:

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ

(Շարունակելի)

ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ

ՀԱՅՅԵՐԷՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

ՀԱՌԱԲԱՐԱՆԻ ՄԵՋ

ԱՆՈՒԱՆՏ ԿԱԹՈՒԴԻԿՈՍՍԱՏ ԱՂԹԱՄԱՐԱՏ

(սպ. էջմեանի 1916)

ՄԱՆՈՒԹ. — Այս աշխատութիւնը՝ որ նաւավար Ղազարի ընդօրինակութիւնն է (1824 թուէն), խմբագրուած է երկու անկախ գրութիւններէ. առաջինը Գաղիկ Սրժբունի թագաւորի քարտուղար Թովմայի գործն է, երկրորդը տիրացու Կերսէսի (ԺԷ դար) Դորախտարար հրատարակիչը (Մհարոպ վրդ. Մաքսուտեանց) կարևոր չէ համարած զբրին սկիզբը դնել փոքրիկ ուսումնասիրութիւն մը, ուր պատմուած դէպքերու, գրութեան ոճի և լեզուի քննութեամբ պարզուէր երեք գրիչներու հեղինակութեան բաժինը. թէ ով է թովմայի քարտուղարը. արդեօք մեզի ծանօթ Թովմայ Արծրունի պատմիչը չէ. թէ իրօք Ղազարը հասարակ ընդօրինակող մըն է, ինչպէս ինքը կը խոստովանի (էջ 84, տող 27-28) թէ խմբագրող մը եղած է (հմտութեամբ). վարը գետնահարաբար տակ թովմայէն ընդօրինակուած ամբողջ հատուած մը). և կամ ո՞ր մասերն են յատ-

1. Փաւ. 155-6. — 2. Աստ. 51-53. — 3. Հմտ. աստ. 35.